ՍՏԵՓԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՌԵԶԱ ՇԱՀ ՓԱՀԼԱՎԻԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Կրթված և բանիմաց բնակչության դաստիարակելը հասարակության շրջանում բարեփոխումներ անցկացնելու կարևորագույն գործոններից է:

Իրանում 20-րդ դարի սկզբներին՝ Փահլավիների դինաստիայի հաստատման ժամանակաշրջանում, բնակչության մեծ մասն անգրագետ էր, և այդ խնդրի հաղթահարումը դարձել էր անհետաձգելի անհրաժեշտություն: Ռեզա շահ Փահլավին բավարար կրթություն չէր ստացել, սակայն խորապես գիտակցում էր դրա արժեքը՝ կարևորելով այն որպես «ազգի երիտասարդներին և մեծահասակներին միատարրության, արդիականացման և ազգայնացման ներշնչման միջոց: Դրանում նա տեսնում էր այն գործիքը, որի օգնությամբ կարելի էր պայքարել սնահավատության, հետամնացության դեմ և դաստիարակել միասնական ժամանակակից ազգ»[1]:

Ռեզա շահի կառավարման շրջանում կատարված բարեփոխումների մասին ամփոփ կարծիք կարելի է կազմել՝ «քննարկելով թագավորության 16 տարիների ընթացքում նրա վարած քաղաքականությունը, կիրառած մեթոդները, սակայն նաև՝ հաշվի առնելով նրա գործունեությունը ոգեշնչող պատճառները և պայմանները: Միգուցե, դրանք կարելի է ընդհանրացնել մեկ նախադասությամբ. նա ցանկանում էր տեսնել Իրանն անկախ, հարգված այլ ազգերի կողմից, նա ցանկանում էր, որ Իրանն ինքը վարի իր արտաքին քաղաքականությունը, առանց որևիցե այլ կողմի ուղղություն ցույց տալու կամ հովանավորության, ուզում էր տեսնել Իրանը հզոր ոչ թե կայսրության հզորությամբ, այլ բնական, մարդկային և բարոյական ռեսուրսների հարստությամբ: Սա էր նրա՝ ազգայնականության պատկերացումը»[2]:

Ռեզա շահի քաղաքականությունը որոշ չափով կրում էր Թուրքիայի առաջնորդ Քեմալ Աթաթուրքի քաղաքականության ազդեցությունը, որի հետ նա հանդիպում է ունեցել 1934թ. Անկարայում[3]: Սակայն Ռեզա շահի բարեփոխումները ավելի չափավոր էին, քանի որ նրա խնդիրը բավականին բարդ էր. Թուրքիան ավելի սերտ կապեր ուներ Արևմուտքի հետ և

ավելի պատրաստ էր՝ ընդունելու բարեփոխումներ: Բացի այդ, Ռեզա շահը չէր կարող կտրուկ կերպով ընդդիմանալ հոգևորականությանը, հատկապես՝ տեսնելով, որ իր հարևան Աֆղանստանի թագավոր Ամանուլլահը զրկվել էր գահից կտրուկ բարեփոխումների պատճառով[4]: Այդուհանդերձ Իրանն արևմտականացնելու՝ Ռեզա շահի ձգտումը երբեմն հասցնում էր նրան ծայրահեղությունների, որոնցից մեկն էր օպերայի կառուցումը: Ձգտելով արդիականացնել երկիրը, նա տենչում էր հզորացնել այն և միաժամանակ թուլացնել հոգևորականության ազդեցությունը: Այդ նպատակով Ռեզա շահը փորձում էր «զգեշնչել իրանցիներին՝ հիշեցնելով նրանց Իրանի փառավոր անցյալը, «Շահնամեի» հերոսներին, արիական ծագումը, որպեսզի նոր ավյունով և կյանքով լցնի ժողովրդին»[5]:

Ազգայնական շարժումն Իրանում չստացավ այն ուժը, որը ստացել էր Թուրքիայում, սակայն այն թողեց իր կնիքը երկրի և մարդկանց վրա[6]:

19-րդ դարում Պարսկաստանի կրթական համակարգն ամբողջությամբ դարձել էր հոգևորականության մենաշնորհը: Տարրական դպրոցները՝ մաքթաբները, որտեղ դասավանդում էին ցածրաստիճան հոգևորականները՝ ախունդները, գտնվում էին հոգևորականության ազդեցության ներքո՝ չենթարկվելով պետական կամ մասնագիտական վերահսկողության: Այդ ժամանակաշրջանում ուսուցման տվյալ ձևը բավականին մեծ եկամուտ էր ապահովում ախունդների համար, և այդ էր պատճառը, որ երկրով մեկ տարածվել էին մակթաբները: Մակթաբներում դասավանդվող առարկաներն ամբողջությամբ ցույց են տալիս 19-րդ դարի Պարսկաստանի վիճակը: Հիմնական առարկաներն էին գրելը, կարդալը, գեղագրությունը: Այնուհետև աշակերտներն անգիր էին անում պարսկաարաբական չափածո բառարանը (Նիսաբ), Ղուրանից հսկայածավալ հատվածներ: Առավել գնահատվում էին նրանք, ովքեր անգիր գիտեին ամբողջ Ղուրանը[7]:

Բացի մակթաբներից այդ ժամանակ Պարսկաստանում տարրական կրթության այլ օջախներ չկային: Միջնակարգ ուսուցումը ամբողջությամբ մասնավոր հիմքերի վրա էր: Ուսուցիչները հիմնականում աշխարհիկ գրագիրներ էին, ովքեր դասավանդում էին աշակերտի տանը: Ուսուցման հիմքն էին կազմում գեղագրությունը, դասական գրականությունը, արաբերենի քերականությունը, հազվադեպ անցնում էին տրամաբանություն, մաթեմատիկա և երաժշտություն[8]:

Նրանց համար, ովքեր չէին պատրաստվում հոգևորական դառնալ, կրթական գործընթացը սահմանափակվում էր այդքանով: Կենդանի էին մնացել միայն հիշողությունները երբեմնի չքնաղ՝ Նիշապուրի, Թավրիզի և Բաղդադի միջնադարյան իսլամական համալսարանների փառավոր անցյալի մասին:

Բարձագույն կրթության միակ օջախներն էին Ղոմի և Սպահանի հոգևոր դպրոցները՝ մեդրեսեները, որտեղ հիմնական առարկաներն էին աստվածաբանությունն, արաբերենի քերականությունը, հռետորական արվեստը, իրավագիտությունը (շարիաթ և ֆիքհ), տրամաբանությունը, թվաբանությունն, աստղագիտությունը[9]: Սակայն երիտասարդների զգալի մասի հիմնական նպատակը գիտելիքների հարստացումն էր, այլ ոչ թե հոգևորական դառնալը: Այս միտումը էլ ավելի ուժեղացավ 19-րդ դարի վերջում:

Դեռևս 19-րդ դարի 1-ին կեսին Պարսկաստանում սկսվել էին կրթական բարեփոխումներ: Իրանում արևմտյան տիպի դպրոցներ հիմնելու առաջին փորձերն իրականացվեցին 19-րդ դարի կեսերին օտարերկրյա միսիոներների կողմից: Այդ դպրոցներ կարող էին հաճախել միայն քրիստոնյաները, սակայն շուտով առաջադեմ մահմեդականների երեխաները նույնպես օգտվեցին ընձեռնված հնարավորությունից: Ժամանակի ընթացքում դրանք մեծ կարևորություն ձեռք բերեցին՝ դաստիարակելով մի նոր սերունդ, որի ներկայացուցիչներից շատերը Ռեզա շահի կառավարման շրջանում զգալի դեր խաղացին երկրի արևմտականացման գործում: Մինչև 1929թ. Պարսկաստանում կար շուրջ 50 օտարերկրյա դպրոց, որոնցից 25 ամերիկյան միսիոներական դպրոցներ էին[10]:

1851թ. վարչապետ Միրզա Թաղի խանի նախաձեռնությամբ Թեհրանում հիմնվեց աշխարհիկ տիպի առաջին ուսումնարանը՝ Դարոլֆոնունը[11], որը համապատասխանում էր ֆրանսիական լիցեին՝ ներառելով միջնակարգ և տարրական բարձրագույն կրթությունը: Կառավարության ջանքերով 19-րդ դարի 2-րդ կեսին բացվեց ևս 2 նմանատիպ դպրոց և 2 զինվորական քոլեջ:

1898թ. Իրանի կառավարությունը հիմնեց Ազգային դպրոցների խորհուրդ, որը ներառում էր ժամանակի աչքի ընկնող մարդկանց: Նրանց ջանքերով էլ ամբողջ երկրով մեկ հիմնվեցին աշխարհիկ տարրական առաջին դպրոցները, որոնց ծրագիրը գրեթե չէր տարբերվում մակթաբների ծրագրից:

Բարեփոխումների երկրորդ փուլը սկսվեց 1906թ. Սահմանադրական հեղափոխությունից հետո, երբ երկրում ժամանակակից կրթական համակարգ հիմնելու ուղղությամբ իրականացվեցին չափավոր քայլեր: 1910թ. Մեջլիսն ընդունեց Իրանի կրթության մասին օրենքը և ստեղծեց Կրթական գործերով նախարարություն, որի ամբողջական անվանումն էր «Կրթության, Վաքֆի և Գեղեցիկ արվեստների նախարարություն»[12]: 1911թ. ընդունվեց կրթության մասին հիմնական օրենքը, որով էլ ուրվագծվեցին Իրանում ժամանակակից կրթական համակարգ հիմնելու ծրագրերը: Սակայն երկրում հոգևորականության մեծ ազդեցության

պատճառով նախատեսվող բարեփոխումներն այդ շրջանում անիրականանալի էին:

Երբ իշխանության գլուխ եկավ Ռեզա շահը, երկրի ազգային դպրոցներում (պետական և մասնավոր աշխարհիկ) ընդգրկված էր ընդամենը 10.000 ուսանող[13]:

Ռեզա շահն իշխանության առաջին տարիներին իր ուշադրությունը կենտրոնացրել էր երկրում ներքին անվտանգության հաստատմանը և բանակի վերակազմավորմանը: Դա էր հիմնական պատճառը, որ ազգային գործունեության այլ հարցերով զբաղվում էին ավելի ցածր դիրք գրավող անձինք: Այդ շրջանում Կրթության նախարարության կառուցվածքը փոփոխության գրեթե չէր ենթարկվել, և դրա ազդեցությունը կրթության ոլորտում աննշան էր: Ռեզա շահի հիմնական նպատակն էր ընդլայնել կրթական համակարգը, որպեսզի այն կարողանա բավարարել ամբողջ ազգի կարիքները: Այդ ծրագիրն ի կատար ածելու համար անհրաժեշտ էր ունենալ կենտրոնացված նախարարություն, որը կկարողանար իրականացնել լիարժեք հսկողություն կրթության բոլոր փուլերի վրա:

Դեռևս 1921թ. Կրթության նախարարությանն առընթեր ստեղծվել էր Կրթության գործերով գերագույն խորհուրդ, որի պարտականություններից էր Արևմուտքի ուսումնական ծրագրերի լուրջ ուսումնասիրումը, ինչպես նաև իգական և արական մանկավարժական քոլեջների ծրագրերի պատրաստումը: Դա Պարսկաստանում պրոֆեսիոնալ ուսուցիչներ պատրաստելու առաջին քայլն էր: Այդ Խորհրդի պարտականություններից էր նաև եկեղեցական նվիրատվությունները պետական դպրոցներին հատկացնելը, պետական միջոցների հաշվին Եվրոպա ուղարկվող ուսանողներին ընտրելը, ինչպես նաև Խորհրդին կից ենթակոմիտե ստեղծելը, որը պետք է հետևեր մակաբների գործունեությանը, սանիտարահիգիենիկ վիճակին, կարգապահությանը, իրականացվող բարեփոխումներին:

Իրանի կրթության մասին օրենքով նախատեսված չէր մանկապարտեզների հիմնադրումը, սակայն արդեն 1918թ. Թեհրանում բացվել էր առաջին մասնավոր, իսկ 1933թ.՝ պետական մանկապարտեզը: Այսուհետ մանկապարտեզները ներգրավվեցին կրթական համակարգի մեջ: Այնտեղ հաճախում էին 4-7 տարեկան երեխաներ. նրանք զբաղվում էին խաղերով, երգով, պարով, արտասանությամբ, անցնում էին թվաբանություն, իսկ վերջին տարվա ընթացքում՝ այբուբեն:

1921թ. Կրթության նախարարությունը կազմեց տարրական և միջնակարգ ուսուցման առաջին ամբողջական տասներկուամյա ծրագիրը, որն էլ իր հերթին բաժանվում էր երկու վեցամյա փուլերի՝ տարրական և միջին մակարդակների: Կրթության նախարարությունը 6-րդ, 9-րդ և 12-րդ տարվա վերջում քննություններ էր կազմակերպում: Լավագույն աշա-

կերտները վկայագրեր էին ստանում: 1927թ. Մեջլիսն օրենք ընդունեց պարտադիր և անվճար տարրական կրթության մասին, որը հիմնականում չիրագործվեց[14]: Տարրական դպրոցում անցնում էին պարսկերեն, արաբերեն, գեղագրություն, թվաբանություն, Պարսկաստանի պատմություն և աշխարհագրություն, ֆիզիկական կուլտուրա: Ռեզա շահի կառավարման շրջանում Իրանում տարածվեցին ընդհանուր դպրոցներ տղաների և աղջիկների համար, որոնց ուսումնական ծրագրերում կար որոշակի տարբերություն: Աղջիկները չէին անցնում բոլոր նշված առարկաները՝ փոխարենը անցնելով կարուձև և նկարչություն: 1936թ-ից ծրագրի մեջ մտցրեցին արվեստ և երաժշտություն[15]:

Միջնակարգ ուսուցումը, որը պարտադիր չէր, վճարովի էր, սակայն վարձը բավականին ցածր էր: Բացի այդ, ուսուցիչների, ցածրաստիճան պետական ծառայողների, ինչպես նաև լավ սովորող երեխաների համդեպ բացառություններ էին կիրառվում: Միջնակարգ ուսուցման վեցամյա ծրագիրը, որը բաղկացած էր երկու եռամյա փուլերից, բավականին ընդարձակ էր: Առաջին երեք տարիների առարկաները տղաների և աղջիկների համար նույնն էին. նրանք ուսումնասիրում էին Ղուրանը, արաբերեն, եվրոպական լեզու (սովորաբար ֆրանսերեն), մի շարք ճշգրիտ, հումանիտար և բնագիտական առարկաներ, ինչպես նաև հիգիենա: Տղաները անցնում էին նաև քիմիա, ֆիզիկա, իսկ առավել ընդունակները՝ նաև հանրահաշիվ: Աղջիկներն այդ առարկաների փոխարեն անցնում էին տնարարություն, կարուձև, երեխաների խնամք: Մակայն լաբորատոր պայմաններ չկային, և ուսուցումը հիմնականում տեսական բնույթ էր կրում: Հանգստի ժամերին աշակերտները զբաղվում էին խաղերով, երաժշտությամբ, և ներկայացումներ բեմադրելով[16]: Այս ծրագրից երևում է, որ Իրանի կրթական համակարգի հիմնական նպատակը երեխաներին որպես հասարակության լավ անդամ դաստիարակելն էր: Դիմելով Կոլումբիական մանկավարժական քոլեջին՝ կրթության այդ ժամանակվա նախարարը գրում էր. «Ավելի կարևոր է սովորեցնել, թե ինչպես է պետք ապրել, քան ուղղակի սովորեցնել գրագիտության տարրերը»[17]:

Միջնակարգ ուսուցման առաջին փուլի շրջանավարտները կարող էին ուսումը շարունակել ոչ միայն երկրորդ փուլում, այլև պետական տեխնիկական դպրոցներում: Վերջին երեք տարիների ընթացքում աշակերտները մասնագիտանում էին՝ բարձրագույն կրթօջախ ընդունվելու համար: Այսպիսով նոր ծրագիրն այն աստիճան գերծանրաբեռնված էր, որ ուսանողները չհասցնելով ընկալել իրենց համար նորը և օտարը՝ ստիպված էին լինում դիմել անգիր անելու հին մեթոդին: Դա էլ հնարավորություն չէր ընձեռում նրանց անհատականության զարգացման, մտածելու, խնդիրները հասկանալու և դրանց լուծումը ինքնուրույն գտնելու համար:

Տարրական և միջնակարգ կրթության նոր ծրագիրն առաջ բերեց կրթված ուսուցիչների, որակյալ դասագրքերի, ուսուցման նոր մեթոդների անհրաժեշտություն:

Դեռևս 1918թ. Թեհրանում բացվել էր առաջին մանկավարժական քոլեջը՝ առանձին բաժիններով կանանց և տղամարդկանց համար: Սակայն այս ուղղությամբ ևս հիմնական քայլերը կատարվեցին Ռեզա շահի օրոք: 1929թ. Թեհրանի մանկավարժական քոլեջում սահմանվեց պետական կրթաթոշակ՝ տարեկան 15 կարիքավոր ուսանողների համար: 1934թ. ընդունվեց Ուսուցիչների պատրաստման օրենքը, ըստ որի 5 տարվա ընթացքում երկրում պետք է հիմնվեր 25 մանկավարժական քոլեջ: Սակայն արդեն 1939թ. դրանց թիվը գերազանցել էր նշվածից, իսկ Ռեզա շահի կառավարման վերջին տարվա ընթացքում այն անցնում էր 36-ից[18]: Այս օրենքն արտոնություններ էր շնորհում տվյալ քոլեջների շրջանավարտներին: Նոր սերնդի ուսուցիչները ոչ միայն ավելի բարձր աշխատավարձ էին ստանում, այլև ավելի մեծ հարգանք էին վայելում: Փոփոխություններ տեղի ունեցան նաև սոցիալական ոլորտում: Բարեփոխումների շնորհիվ մտավորականությունը հասարակության շերտից վերածեց համեմատաբար հանգիստ, ապահով, հարգված սոցիալական դասի՝ կազմելով երկրի աշխատուժի մոտ 7%[19]:

Ուշադրություն էին դարձնում դպրոցների սանիտարահիգիենիկ վիճակին, որը իրականացվում էր հատուկ կրթություն ստացած բժշկական սպաների կողմից:

1928թ. սկսած Կրթության նախարարությունը ձեռնամուխ եղավ դասագրքերի խնդրի լուծմանը: Այս ոլորտում զգալի էր ֆրանսիական ուսումնական մեթոդների, տեքստերի ազդեցությունը: Անգամ պարսից լեզվի այբբենարանները մշակվում էին ֆրանսիական օրինակով, իսկ պատմության, աշխարհագրության և այլ առարկաների դասագրքերը հաճախ ուղղակի թարգմանվում էին ֆրանսերենից: 1939թ. հրատարակվեցին նոր դասագրքեր, որոնք առաջին անգամ ներառում էին դպրոցական ծրագիրը մինչև միջնակարգ ուսուցման 1-ին փուլը:

Պետական դպրոցների հետ մեկտեղ երկրում գոյություն ունեին մասնավոր դպրոցներ, որոնք հիմնադրվել էին օտարերկրյա միսիոներների կամ կրոնական փոքրամասնությունների կողմից, ինչպիսիք էին հայերը, հրեաները, բահայիները, զրադաշտականները: Հայկական և հրեական դպրոցների աշակերտները միայն տվյալ համայնքների անդամների երեխաներն էին, իսկ բահայական, զրադաշտական կամ միսիոներական դպրոցներ հաճախում էին բոլոր ցանկացողները: Ի շնորհիվ օտարազգի կրոնակիցների հետ ունեցած կապերի՝ այս դպրոցները մեծ հեղինակություն էին վայելում: Օրինակ՝ չնայած բահայիների հանդեպ պաշտոնական ճնշմանը, Թեհրանում բահայիների դպրոց էին հաճախում առա-

ջաղեմ և ազդեցիկ ընտանիքների երեխաներից շատերը, այդ թվում նաև Ռեզա շահի ավագ դստերը և թագաժառանգը[20]:

Պետական քաղաքականությունը մասնավոր դպրոցների հանդեպ համապատասխանում էր Ռեզա շահի ազգայնական, կենտրոնացման՝ իրանիզացիայի ծրագրերին: Կառավարությունը սկզբում վարում էր հանդուրժողական քաղաքականություն այդ դպրոցների հանդեպ՝ որոշ դեպքերում անգամ հովանավորելով դրանց: Սակայն 1927թ. սկսվեց շարժում բոլոր մասնավոր դպրոցները վերահսկողության տակ վերցնելու ուղղությամբ: Թերթերը մեղադրում էին դրանց իսլամի հիմքերը խարխլելու և ուսանողների շրջանում «իրանական ամեն ինչի հանդեպ արհամարհանքի» զգացում դաստիարակելու մեջ[21]: 1928թ. սեպտեմբերի 5-ին Կրթության նախարարության հրամանով բոլոր ամերիկյան միսիոներական դպրոցները մտցվեցին Կրթության նախարարության հսկողության ներքո: Դրանք պետք է հետևին նախարարության մշակած ծրագրերին, դասավանդումը պետք է անցկացվեր միայն պարսկերեն լեզվով: Իսկ բարձր դասարաններում մահմեդական կրոն դավանող երեխաներին արգելվում էր Աստվածաշունչ կարդալը: 1940 թ. Կրթության նախարարության ազգայնական քաղաքականության հետևանքով միսիոներական դպրոցները վերածվեցին պետական դպրոցների, իսկ դրանց ուսուցիչներին «խնդրեցին» հեռանալ երկրից: Սկզբում այդ ճակատագրից խուսափել էին բրիտանական միսիոներական դպրոցների ուսուցիչները՝ համաձայն Իրանի և Բրիտանիայի արտաքին գործերի նախարարների միջև եղած պայմանավորվածության, ըստ որի «այդ արժանի տղամարդկանց և կանանց թույլ է տրվում կատարել իրենց մարդասիրական և կրթական գործունեությունը՝ պայմանով, որ նրանք չեն խառնվի Իրանի հասարակական կարգերին, օրենքներին և կանոններին»[22]: Սակայն հետագայում դրանք ևս փակվեցին: Իրանի կառավարությունը նման քաղաքականությունը բացատրում էր այն հանգամանքով, որ եթե բրիտանական և ամերիկյան դպրոցները շարունակեն իրենց գործունեությունը, ապա ռուսները ևս կցանկանան բացել ազգային դպրոցներ:

Նմանատիպ քաղաքականություն էին վարում նաև պարսկական մասնավոր դպրոցների հանդեպ, որի հետևանքով 1930թ. հոկտեմբերին այն դպրոցները, որոնք «համապատասխանում էին նախարարության ակադեմիական և բարոյական չափանիշներին» ստացան պետական կարգավիճակ, իսկ այդ չափանիշներին չհամապատասխանող դպրոցները ավարտեցին իրենց գործունեությունը, քանի որ դրանց դիպլոմները և վկայագրերը արժեք չունեին: Դրան հետևեց 1934թ. հոկտեմբերին բահայիների դպրոցների փակումը: Հայկական դպրոցները սկզբում կորցրեցին եվրոպական լեզուներ դասավանդելու, իսկ 1938թ.՝ նաև գործունեության իրավունքը[23]: Այս ամենը կատարվում էր կրոնական փոքրա-

մասնություններին միաձուլելու նպատակով, որը Ռեզա շահի ազգայնական քաղաքականության հիմքերից էր:

Կարևոր նվաճումներից էր երկրում տարբեր նախարարությունների կողմից տեխնիկական դպրոցների հիմնումը, որոնք պատրաստում էին բարձրորակ մասնագետներ տվյալ նախարարությունների համապատասխան բաժինների համար: 1922թ. պարսկական կառավարության մեծածավալ օգնության շնորհիվ՝ գերմանացիները Թեհրանում բացեցին առաջին անկախ ճարտարագիտական դպրոցը, որը հետագայում վերածեց իրանագերմանական արտադրական դպրոցի: Նշանակալի է որ, երբ 1940թ. Կրթության նախարարությունը փակեց բոլոր օտարերկրյա դպրոցները, այն խուսափեց այդ ճակատագրից: 1923թ-ից սկսած արտադրական բնույթի ցանկացած պայմանագիր արտասահմանցիների հետ ենթադրում էր տվյալ ոլորտի տեխնիկական ուսուցման ապահովում իրանցիների համար[24]: Տեխնիկական դպրոցներ էր բացել նաև Անգլո-իրանական նավթային ընկերությունը, որոնց շրջանավարտները պետք է ավարտելուց հետո աշխատեին ընկերությունում: Մակայն նրանցից շատերը իրենց կենցաղն ապահովելու համար բացում էին փոքրիկ արհեստանոցներ և ստացած գիտելիքները կիրառում այնտեղ:

1930-ական թթ. հիմնեցին Երաժշտական և Գեղեցիկ արվեստների ակադեմիաները: Գեղեցիկ արվեստների ակադեմիան իր ուշադրությունը կենտրոնացնում էր պարսկական արվեստների և արհեստների վերականգնմանը՝ գորգագործությանը, մանրանկարչությանը, խճանկարին: Իսկ Երաժշտական ակադեմիան Արևմուտքի ազդեցության տարածման օղակ էր:

Պետական կրթության զարգացումը ի վերջո ունեցավ տրամաբանական շարունակություն, երբ 1934թ. մայիսին ընդունվեց Իրանում համալսարան հիմնելու մասին օրենքը[25]: Համալսարանի հիմնաքարը դրվեց 1935թ փետրվարի 5-ին Ռեզա շահի կողմից: Ամեն տարի այդ օրը տոնվում էր որպես կրթության և ծառատունկի փառատոն: Համալսարանը համեմատաբար անկախ ինստիտուտ էր, ղեկավարվում էր նախագահի, փոխնախագահի, բաժինների կամ ֆակուլտետների դեկանների և դասախոսների մասնակցությամբ կազմված խորհրդի կողմից: Մակայն Կրթության նախարարությունն էր զբաղվում պաշտոնների նշանակմամբ, աշխատավարձի, ուսումնական ծրագրերի և այլ խնդիրների կարգավորմամբ: Ռեզա շահի հրաժարական տալուց մեկ տարի անց Մեջլիսը, հանելով Համալսարանը կրթության նախարարության վերահսկողությունից, այն դարձրեց լիակատար անկախ մարմին, որը հետագայում դարձավ քաղաքական ընդբոստությունների օջախ: Համալսարանում կար հինգ ֆակուլտետ՝ արվեստի, բնագիտական, բժշկական, իրավաբանական և ճարտարագիտական[26]: Հոգևորականության ուժը թուլաց-

նելու համար Ռեզա շահը մի խումբ առաջադեմ և գիտակ մպլանների հետ Համալսարանում ստեղծեց Աստվածաբանության ֆակուլտետ, որը գտնվում էր Թեհրանի Միփահսալար մզկիթում: «Այդ ժամանակվանից բոլոր երիտասարդ հոգևորականները պետք է ներկայանային կրթված աստվածաբանների խորհրդին և քննություն հանձնեին, որպեսզի որակավորվեին՝ իրենց հոգևորական գործունեությունը շարունակելու համար: Սակայն դրանց մակարդակը այնքան ցածր էր, որ թեկնածուների 90%, տապալելով քննությունները, ստիպված եղավ նոր մասնագիտություն ընտրել: Այսուհետ Իրանի քաղաքներն ու գյուղերն ազատվեցին հոգևորական խաբեբաներից»[27]: Հետագայում, արդեն գոյություն ունեցող՝ Գեղեցիկ արվեստների և Գյուղատնտեսական քոլեջները մտցվեցին Համալսարանի կազմի մեջ, որի դասախոսները հիմնականում կրթություն էին ստացել Եվրոպայում: Կային նաև զգալի քանակությամբ արտասահմանցի դասախոսներ: Առաջին տասնամյակում Թեհրանի համալսարան ընդունվեցին ուսանողներ Հնդկաստանից, Աֆղանստանից, Թուրքիայից և Խորհրդային Միությունից: Արդեն 1941թ. Համալսարանի 11 ինստիտուտներում գրանցված էր 3.300 ուսանող[28]:

Սակայն գրագիտության, ակադեմիական ընդհանրության և մտավոր կարգապահության ավանդույթները դեռևս արմատավորված չէին երկրում: Դա էր պատճառներից մեկը, որ Համալսարանը բավականին մակերեսային բնույթ էր կրում: Դասախոսները կարդում էին դասախոսություններ, ուսանողները բառ առ բառ գրանցում դրանք, իսկ քննությանը ընդամենը վերարտադրում անգիր արած նյութը: Համալսարանի գրադարանները սովորաբար դատարկ էին:

Արևմուտքի ազդեցությունն ընկալելու և հետո ներմուծելու գործում առավել մեծ հնարավորություն ունեին արտասահմանում սովորող երիտասարդները: Դեռևս 19-րդ դարում մի շարք ուսանողներ մեկնել էին Եվրոպա՝ զինվորական կրթություն ստանալու նպատակով: Եվ քանի որ արդիականացված երկրի պահանջները հոգալու համար կարևոր էր ունենալ լավ կրթված և բարձր որակավորում ունեցող՝ մեծ քանակությամբ մասնագետներ, 1928թ. Մեջլիսը միջոցներ տրամադրեց տարեկան 100 ուսանող Եվրոպա և ԱՄՆ ուղարկելու համար: Այդ միջոցների 35% նախատեսված էր մանկավարժական գիտություններով զբաղվող ուսանողների համար[29]: 1940թ. հրապարակված թվերը ցույց են տալիս, որ այդ շրջանում 432 շրջանավարտ արդեն վերադարձել էր արտասահմանից, իսկ 452 դեռ շարունակում էին իրենց ուսումը: Այս թվերը ներառում են միայն Կրթության նախարարության հովանավորությամբ արտասահմանում սովորողներին: Եթե հաշվի առնենք նաև այլ նախարարությունների հովանավորությամբ արտասահմանում սովորողներին, ապա նրանց թիվը 1922-38թթ. կկազմի շուրջ 1500 հոգի, որոնց մեծ մասը գրանցված էր

Ֆրանսիայի բարձրագույն կրթության օջախներում: Զգալի էր նաև Բեյրութի Ամերիկյան համալսարանում և Կոնստանդնուպոլսի Ռոբերտ քոլեջում սովորողների թիվը[30]: Մեծ էր արտասահմանում կրթություն ստացած ուսանողների դերը երկրի զարգացման գործում: Սակայն այդ ուսանողները վերադառնալով չէին կարողանում հարմարվել հին պայմաններին և իրականացնել ստացած գիտելիքները այնպես, ինչպես նախատեսված էր, քանի որ այդ գիտելիքները հիմնված էին տեխնոլոգիապես առաջադեմ, բարձր արտադրողական երկրների պահանջարկի վրա:

1935թ. մարտին հիմնվեց Իրանի գիտությունների ակադեմիան («Ֆարհանգիստան»), որի խնդիրներից էր պարսկերեն լեզուն օտար բառերից (մասնավորապես արաբերեն, որը բառապաշարի մոտ 70% էր կազմում) մաքրելը և ժամանակակից լեզվական բառարան կազմելը[31]:

Իրանում ժամանակակից գրադարանները հայտնվել են 1920-1930-ական թթ., որոնցից խոշորագույնն էր «Ազգային գրադարանը», որը հիմնադրվել էր 1937 թվին[32]:

Անչափ կարևոր էին նշված ժամանակաշրջանում կատարված բարեփոխումները երկրի մեծահասակ բնակչության կրթության գործում: Այս ուղղությամբ ծրագրեր մշակվել էին դեռևս Սահմանադրական հեղափոխությունից հետո, սակայն դրանք երբեք չեն իրագործվել: Ռեզա շահը գիտակցում էր, որ մեծահասակների կրթական մակարդակի բարձրացումը կնպաստի իր՝ բարեփոխումների և արդիականացման ծրագրի իրականացմանը: Եվ արդեն 1936-1937 ակադեմիական տարվա սկզբում մեծահասակների համար ամբողջ երկրով մեկ բացվեցին 1500 երեկոյան դպրոցներ, որոնք 2 տիպի էին՝ լրիվ անգրագետների և կիսագրագետների համար: Հետագայում դրանց թիվը զգալիորեն ավելացավ՝ հասցնելով ընդհանուր ծախսերը 1.607.327 ռիալի[33]: Այդ դասընթացները պարտադիր էին պետական գրասենյակների անգրագետ և կիսագրագետ աշխատակիցների համար: Կրթության նախարարությունը նշում էր, որ մեծահասակների ուսուցման երկամյա ծրագիրը հետապնդում է 2 նպատակ՝ պայքարել անգրագիտության դեմ և մեծահասակներին ապահովել լավ քաղաքացի լինելու համար անհրաժեշտ անհատական և սոցիալական գիտելիքներով: Կառավարությունն ամեն կերպ աջակցում էր այս ծրագրի իրականացմանը: Տարրական ուսուցման ծրագրի հաջողությունը հանգեցրեց 1937թ. սկզբին մեծահասակների համար 22 միջնակարգ դպրոցի բացմանը, որոնց ուսումնական ծրագիրը համապատասխանում էր սովորական միջնակարգ դպրոցների ծրագրին: Այնտեղ կարող էին հաճախել նաև այն երիտասարդները, ովքեր տարբեր պատճառներով չէին հաճախում ցերեկը: 1940թ. արդեն նման դասարանների թիվը հասնում էր 2.133, աշակերտներինը՝ 157,197: Այս դասընթացներին մասնակ-

ցում էին 18 տարեկանից բարձր տարբեր մասնագիտության տեր մարդիկ[34]:

Մեծահասակների կրթության ծրագրի հաջողությամբ ոգևորված՝ Կրթության նախարարությունը 1939թ հունվարին ստեղծեց Զանգվածային լուսավորության բաժին, որի կազմի մեջ էին Համալսարանի, մեծահասակների դպրոցների դասախոսներ, սկաուտական շարժման առաջնորդներ, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ և այլն: Նրանք անվճար դասախոսություններ էին կարդում տարբեր թեմաների շուրջ: 1940-41թթ. կազմակերպվեցին 700-ից ավելի դասախոսություններ, որոնց մասնակցեցին մոտ 1.500.000 մարդ: Այդ դասախոսությունների հիմնական նպատակը ազգային ոգու հզորացումն էր, որն էլ ենթադրում էր ուշադրություն ժողովրդի հանդեպ: Այդ մասին է շեշտել Ռեզա շահը 1940թ. հունիսի 29-ին լրագրողների հետ ունեցած ասուլիսում. «Իրանը չի կարող զերծ մնալ կատարվող իրադարձություններից, ժողովուրդն էլ ոչ միայն պետք է տեղյակ լինի ազգային և համաշխարհային հարաբերությունների մասին, այլև պետք է սովորի ինքը հասկանա և մեկնաբանի դրանք»[35]:

Ռեզա շահի իշխանության օրոք քայլեր ձեռնարկվեցին նաև մարզական ավանդույթները վերականգնելու ուղղությամբ: 1933թ. Կրթության նախարարությանն առընթեր թագաժառանգի նախագահությամբ հիմնվեց Ֆիզիկական դաստիարակության խորհուրդ, որը կազմակերպում էր ոչ միայն միջդպրոցական, այլև համազգային ատլետիկ մրցումներ: Վերականգնվում էին մարզական հին ավանդույթները, ինչպես նաև ընդօրինակվում էին նոր եվրոպական մարզաձևեր: 1936թ. վերադառնալով Շվեյցարիայից՝ թագաժառանգը ստանձնեց բոլոր սպորտային միությունների և սկաուտական շարժման պատվավոր նախագահի պաշտոնը՝ մեծապես նպաստելով սպորտի զարգացմանը: Առաջին սկաուտական կազմակերպությունն Իրանում ստեղծվել է դեռևս 1925թ., որը հետագայում միացել է միջազգային կազմակերպությանը: Նշանակալից է, որ սկաուտական շարժմանը մասնակցում էին նաև աղջիկներ: 1940թ. Իրանում արդեն կար 21.000 սկաուտ[36]: Ֆիզիկական դաստիարակությունը և սկաուտական շարժումը մտցվեցին դպրոցական պարտադիր ծրագրի մեջ: Այն ժամանակ սկաուտական շարժումը ռազմականացված էր, և 10-12-րդ դասարանների տղաները պետք է շաբաթական 4 ժամ զինվորական պարապմունքներ ունենային, որն իրականացվում էր բանակի սպաների օգնությամբ:

Բացի այն, որ ժամանակակից կրթական համակարգ հիմնելը հզոր խթան էր երկրի արդիականացման համար, Ռեզա շահի կրթական քաղաքականությունը ունեցավ ևս երկու ազդեցություն հասարակության վրա. առաջինը՝ կրթությունը մինչ այդ հոգևորականության մենաշնորհն

էր, իսկ նոր կրթական համակարգը թուլացրեց հոգևորականության ուժը, երկրորդը՝ այն գաղափարը, որ կրթությունը միայն տղաների մենաշնորհը չէ, հիմք դրեց կանանց սոցիալական էմանսիպացիային[37]:

Շահն ուզում էր տեսնել Իրանն անկախ, սակայն նա հարգում էր արևմտյան քաղաքակրթության ստեղծածը և ցանկանում էր օգտագործել այն ի բարօրություն իր երկրի: Շահը կարծում էր, թե հնարավոր էր արևմտյան քաղաքակրթության ստեղծածը հաջողությամբ փոխադրել Իրան՝ առանց պարարտ հող նախապատրաստելու: Արդյունքում Իրանի կրթական նոր համակարգը ձևավորվեց ֆրանսիական օրինակի զգալի ազդեցությամբ, որն էլ խոչընդոտում էր սեփական մտքերի զարգացմանը և չէր համապատասխանում երկրի ավանդույթներին և ստեղծված իրականությանը: Բացի այդ, ինչպես Թուրքիայում, այնպես էլ Իրանում արևմտականացումը կատարվում էր վերևից ներքև: Օրինակ՝ ավելի մեծ ուշադրություն էր դարձվում բարձրագույն, քան տարրական կրթությանը: Սակայն դա էլ բխում էր նոր ռեժիմի պահանջներից[38]:

Չնայած, որ 1925-1941թթ. ընթացքում կրթության զարգացմանը նախատեսված ծախսերը աճել էին մոտավորապես 12 անգամ, սակայն երկրի ընդհանուր ծախսերից կրթությանը բաժին էր հասնում միայն 4%: Այս թիվը չնչին էր բանակին հատկացված միջոցների համեմատ: Այդուհանդերձ կրթության ծախսերը՝ ներառած պետական և մասնավոր գումարները և եկեղեցական նվիրատվությունները, կազմում էին 2-3 մլն. ռիալ, համեմատած 1925թ-ի 100.000-ի հետ: Ներկայացնենք հետևյալ թվերը, որպեսզի ի մի բերենք բարեփոխումների արդյունքները կրթության ոլորտում: 1922-1940թթ. ընթացքում դպրոցների թիվը 612-ից աճել էր 8.237, աշակերտներինը հասել էր 496.960, ուսուցիչներինը՝ 13,646: Մեդրեսեներում սովորողների թիվը 5.984-ից կտրուկ նվազել էր 785: 1940թ. 411 հոգի ավարտեց Թեհրանի համալսարանը, այն դեպքում, երբ 1922թ, բարձրագույն աշխարհիկ կրթություն ստացել էր ընդամենը 15 հոգի՝ ավարտելով Դարոլֆոնունը[39]:

Գնահատելով Ռեզա շահի իշխանության օրոք Իրանում տեղի ունեցած կրթական բարեփոխումները և Արևմուտքի ազդեցության աստիճանը այդ գործընթացում՝ պետք է հավասար ուշադրություն դարձնել կատարված նորամուծություններին և մերժված սկզբունքներին: Անկասկած, հոգևորականությունը նշանակալիորեն կորցրեց իր ազդեցությունն ազգի կրթության գործընթացում: Սակայն նոր համակարգը, ներմուծվելով չափազանց հապճեպ և մակերեսորեն ընդօրինակելով եվրոպական քաղաքակրթության՝ դարերի ընթացքում ստեղծած նվաճումները, ի վիճակի չեղավ դառնալու աստիճանական առաջընթացի բաղկացուցիչ մաս և պահպանելու հնի և նորի հաշվեկշիռը:

Չնայած, որ բարեփոխումներն իրականացվեցին հիմնականում մայրաքաղաքում և խոշոր քաղաքներում, որտեղ զգալի էր արևմուտքի ազդեցությունը, այնուամենայնիվ, Ռեզա շահի եռանդի շնորհիվ էր, որ Իրանում հիմք դրվեց պետական կրթության աշխարհիկ համակարգին[40], որը հանգեցրեց համեմատական, սակայն, այնուամենայնիվ, հաջողության: Այսպիսով Ռեզա շահի կառավարման շրջանը կարելի է բնորոշել որպես փորձարկումների և ուսումնական ծրագրերի աստիճանական ներմուծման, այլ ոչ թե անհապաղ նվաճումների ժամանակաշրջան:

STEPANYAN LUSINE

EDUCATIONAL REFORMS DURING THE REIGN OF REZA SHAH PAHLAVI

(Summary)

After centuries of cultural, social, political and economic decline education in Iran in 19-th century had come to be the monopoly of clergy. At the end of the 19-th century and after the Constitutional Revolution there have been made some temperate attempts to create in Persia an organized contemporary educational system. But most reforms have been made during the reign of Reza Shah Pahlavi. Due to his customary vigour and dispatch a modern secular educational system was established in Persia. Although it did not become a constituent part of gradual evolution, we can summarize the steps for the advancement of education as sending of hundreds of students to Europe and America, the improvement and expansion of elementary and secondary schools, the founding of University of Tehran, the introduction of physical education and scouting in all schools, the erection of modern school buildings, stadiums and playgrounds, the foundation of teacher's colleges in the capital and the provinces, and the introduction of technical and adult education.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Peter Avery, Modern Iran, London, 1965, p. 279.
2. Banani Amin, Modernization of Iran: 1921-1941, Stanford, California, 1961, p. 109.
3. Brigadier-General Sir Percy Sykes, History of Persia, London, 1951, Volume 2, p. 552, Sh'u նաև Lewis V. Thomas and Richard N. Frye, The United States and Turkey and Iran, Cambriedge, Massachussets, 1952, p. 223, Joseph. M.Upton, The History Of Modern Iran: An Interpretation, Cambriedge, Massachussets, 1965, p. 62.
4. Elwell-Sutton, Modern Iran, London, 1941, p. 121.
5. George Lenczowski, Iran Under The Pahlavis, Stanford, California, 1978, p. 80.
6. Lewis V. Thomas and Richard N. Frye, The United States and Turkey and Iran, p. 222.
7. Banani Amin, Modernization of Iran, p. 87.

8. Ibid., p. 88.
9. Աստղագիտություն անցնում էին օրացույցը կարգավորելու և պասն ու աղոթքը ժամանակին կատարելու նպատակով:
10. Banani Amin, Modernization of Iran, p. 89.
11. Վահան Բայբուրդյան, Իրանն այսօր, Երևան, 1999թ., էջ 217.
12. Elwell-Sutton, Modern Iran, p. 121.
13. Banani Amin, Modernization of Iran, p. 91.
14. Иран: Очерки новейшей истории, Москва, 1976г., стр. 77.
15. Banani Amin, Modernization of Iran, p. 93, Տե՛ս նաև Elwell-Sutton, Modern Iran, p. 135, Peter Avery, Modern Iran, p. 276.
16. Ibid., p. 93, Տե՛ս նաև Elwell-Sutton, Modern Iran, p. 135, Peter Avery, Modern Iran, p. 276.
17. Banani Amin, Modernization of Iran, p. 110.
18. Ibid., p. 93, Տե՛ս նաև Peter Avery, Modern Iran, p. 276.
19. یرواند آبراهامیان،ایران بین دو انقلاب ،تهران ۲۰۰۱،ص،۱۳۳
20. Banani Amin, Modernization of Iran, p. 94.
21. Иран: Очерки новейшей истории,стр.78., Տե՛ս նաև Banani Amin, Modernization of Iran, p. 96.
22. Peter Avery, Modern Iran, p. 277-278.
23. یرواند آبراهامیان،ایران بین دو تمعرّب،ص،۱۳۶.
24. Banani Amin, Modernization of Iran, p. 98.
25. George Lenczowski, Iran Under The Pahlavis, p. 90.
26. Elwell-Sutton, Modern Iran, p. 137, Տե՛ս նաև Banani Amin, Modernization of Iran, p. 98,.,یرواند آبراهامیان،ایران بین دو انقلاب ،تهران ۲۰۰۱،ص،۱۳۲
27. George Lenczowski, Iran Under The Pahlavis, p. 306.
28. یرواند آبراهامیان،ایران بین دو انقلاب ،تهران ۲۰۰۱،ص،۱۳۳
29. Joseph. M.Upton, The History of Modern Iran, p. 54, Տե՛ս նաև Иран: Очерки новейшей истории, стр. 77.
30. یرواند آبراهامیان،ایران بین دو انقلاب ،تهران ۲۰۰۱،ص،۱۳۳
31. Elwell-Sutton, Modern Iran, p. 151, Տե՛ս նաև М.С. Иванов, Очерк истории Ирана, АН СССР, 1952г., стр. 323.
32. Վահան Բայբուրդյան, Իրանն այսօր, էջ 235.
33. Banani Amin, Modernization of Iran, p. 103-104, Տե՛ս նաև Elwell-Sutton, Modern Iran, p. 143.
34. Ibid., p. 105, Տե՛ս նաև Elwell-Sutton, Modern Iran, p. 143.
35. Elwell-Sutton, Modern Iran, p. 147.
36. Banani Amin, Modernization of Iran, p. 107.
37. George Lenczowski, Iran Under The Pahlavis, p. 90.
38. Ibid., p. 306.
39. Banani Amin, Modernization of Iran, p. 108, Տե՛ս նաև Elwell-Sutton, Modern Iran, p. 142.,یرواند آبراهامیان،ایران بین دو انقلاب ،تهران ۲۰۰۱،ص،۱۳۳
40. George Lenczowski, Iran Under The Pahlavis, p. 90.